# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ՈՍ/ՓԾ/Ա-2
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «20» «12» 2022թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հատուկ կապ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ղասաբօղլյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 07.02.2022 թվականին կնքված **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ՈՍ/ՓԾ/Ա-2** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետը՝ սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ՈՍ/ՓԾ/Ա-2 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **45 750 000 (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամից նվազեցնել **16 572 576 (տասնվեց միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր յոթանասունվեց)** ՀՀ դրամ գումարի չափով և սահմանել **29 177 424 (քսանինը միլիոն հարյուր յոթանասունյոթ հազար չորս հարյուր քսանչորս)** ՀՀ դրամ:

Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (1) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | <<Հատուկ կապ>> ՓԲԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Չարենցի 4/129 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | <<Ինեկոբանկ>> ԲԲԸ |
| Աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՀ 2052822133751001 |
| Հ/Հ 900011021947 | ՀՎՀՀ 02509254 |
| ՀՎՀՀ 01533334 | հեռ. /010/ 57-02-08 |
| հեռ. 010 59-61-52 | Էլ. փոստ: hatuk_kap@mail.ru |
| էլ. հասցեն՝ police_gnumner@police.am | |
| Վ.Մովսիսյան | Մ. Ղասաբօղլյան |
| /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ | /տնօրեն/ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |